Արձանագրություն 02 /բացման արձանագրություն/

<< ՀՀՇՄԳՀՀԿՀ- ԳՀԾՁԲ-04/21>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

01 փետրվարի, 2021թ., ժ 15:00, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ 1, Գյումրու համայնքապետարան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալաբեկյան – Գյումրու համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

Մ. Մկրտչյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի տեղակալ,

Տ. Ղազարյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի բաժնի գլխավոր մասնագետ,

Լ. Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

Օ. Գևորգյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ.

1. <<ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-04/21>> ծածկագրով գնանշման հարցման գնումների միջոցով առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 08.01.2021թ. էլեկտրոնային եղանակով ընթացակարգի հրավերի տեքստերը միաժամանակ հրապարակվել է www.gnumner.am և www.armeps.am ինտերնետային կայքերում:

1.2 Գյումրի համայնքի կարիքների համար Գյումրի համայնքի պահնորդական ծառայության ձեռքբերման համար <<ՀՀՇՄԳՀՀԿՀ- ԳՀԾՁԲ-04/21>> ծածկագրով գնանշման հարցման գնումների համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Անվանումը	Հասցե
Պանտեռա Սիքյուրիթի ՍՊԸ	Ք. Երևան, Թումանյան փող. 2-րդ փակուղի, 1 տուն, բն.2
Ջոկատ Սեքյուրիթի ՍՊԸ	Ք. Երևան, Աբովյան 3
Լիոն Սեքուրիթի սերվիս ՍՊԸ	Ք.Երևան, Սարի թաղ 5 շարք 5
Տրանս-Սֆեր ՍՊԸ	Ք. Երևան, Կ.Ուլնեցի 59/5 շին 3
Կոմանդիր Սիքյուրիթի ՍՊԸ	Ք. Երևան, Տիգրան Մեծի պ3 նրբ/թիվ 62
Քինգ Մարշալ ՍՊԸ	Ք. Երևան, Գարեգին Նժդեհի փողոց թիվ 53/33

1.3 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտը կազմվել և ուղարկվել է հրավերի պահանջներին համապատասխան:

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

1.6. Մասնակիցների առաջարկած նախնական գները

Հ/հ	Անվանումը	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ	Գնման հայտով նախատեսված գումար ՀՀ դրամ
1.	Ջոկատ Սեքյուրիթի ՍՊԸ	6 270 000	6 270 000	7 040 000
2.	Պանտեռա Սիքյուրիթի ՍՊԸ	6 416 650	7 699 980	
3.	Տրանս-Սֆեր ՍՊԸ	6 840 000	6 840 000	
4.	Կոմանդիր Սիքյուրիթի ՍՊԸ	7 000 000	8 400 000	
5.	Քինգ Մարշալ ՍՊԸ	7 200 000	8 640 000	
6.	Լիոն Սեքուրիթի սերվիս ՍՊԸ	8 250 000	9 900 000	

Հանձնաժողովը արձանագրեց, որ

ա) Նախնական ամփոփման արդյունքում նվազագույն գնային առաջարկ էր ներկայացրել ***Ջոկատ Սեքյուրիթի ՍՊԸ -ն,***

- Քանի որ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

Հանձնաժողովի նիստը կասեցվեց և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցեց գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

- Տրանս-Սֆեր ՍՊԸ-ն մինչև բանակցության նիստը ուղարկեց վերջնական գնային առաջարկ՝ էլեկտրոնային փոստի միջոցով:
- Բանակցության նիստին ներկա էր միայն Քինգ Մարշալ ՍՊԸ-ի ներկայացուցիչը, վերջինս գնային նվազեցում կատարեց հետևյալ կերպ՝

Հ/Հ	Ապրանքի անվանում	Քինգ Մարշալ ՍՊԸ		Տրանս-Սֆեր ՍՊԸ	Գնման հայտով նախատեսված գումար /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
		Արժեքը՝ առանց ԱԱՀ-ն	Արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն	Արժեքը	
1.	Պահնորդական ծառայություն	5 865 000	7 038 000	6 240 000	7 040 000

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնային համեմատականը կատարվում է առանց ԱԱՀ-ի հաշվարկի, բանակցության արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվեց Քինգ Մարշալ ՍՊԸ-ն:
- Հրավերի պահանջներին համապատասխան Քինգ Մարշալ ՍՊԸ-ն Պատվիրատուին ներկայացրեց մասնավոր պահնորդական գործունեության իրականացման լիցենզիայի պատճենը, իսկ ՀՀ ոստիկանության կողմից զենք ու փամփուշտներ պահելու և օգտագործելու թույլտվության վերաբերյալ փաստաթղթի վերաբերյալ մասնակիցը հայտնեց, որ դիմել էր համապատասխան պետական մարմին և գործընթացը ընթացքի մեջ է:
- Հանձնաժողովը որոշեց հաղթող մասնակից ճանաչել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ Տրանս-Սֆեր ՍՊԸ-ին, որը նախորոք ներկայացրել էր հրավերի պահանջներին համապատասխան փաստաթղթերը:
- Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին անհրաժեշտ է ծանուցել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Ա. Բալաբեկյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ ---------- Մ. Մկրտչյան (ԳՊ/ԳԱ)

---------- Տ. Ղազարյան (ԳՊ/ԳԱ)

---------- Լ. Բարսեղյան (ԳՊ/ԲԱ)

---------- Օ. Գևորգյան (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ ---------- Ա. Սարգսյան (ԳՊ/ՄՀմ)